



Երեսնամյա հայագրություն

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



12 հուլիսի **ՀՀ-ում ՌԴ նորանշանակ դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում ՌԴ նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիլովին։

Շնորհավորելով պրն Կոպիլովին մշակաման առիթով՝ Նորին Սրբությունը մաղթեց նրան արդյունավոր գործունեություն։ Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռի եւ ՌԴ դեսպանատան միջեւ մշտապես առկա են եղել ջերմ հարաբերություններ՝ հիմնված հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության վրա։ Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձ կատարեց նաեւ երկու պետությունների միջեւ առկա սերտ ու դաշնակցական հարաբերություններին, որոնց ամրապնդմանն ու զարգացմանն են ուղղված նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ջանքերը։

Իր հերթին դեսպան Սերգեյ Կոպիլովինը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ հանդիպման կապակցությամբ, նշեց, որ հոգեւոր արժեքները եւ մշակութային կապերը հնարավորություն են ստեղծում երկու ժողովուրդների հարաբերությունների առավել զորացման համար եւ ընդգծեց, որ Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիներն այդ ջերմ հարաբերությունների երաշխավորն են։

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը դեսպանին տեղեկություններ փոխանցեց անկախության տարիներին Հայ Եկեղեցու վերագործունեության ու արձանագրած ձեռքբերումների, ինչպես նաեւ առկա մարտահրավերների մասին։ Մասնավոր անդրադարձ կատարվեց քրիստոնեական դաստիարակությանը եւ երիտասարդության հոգեւոր կյանքի զորացմանն ուղղված ծրագրերին։

կան սերն ու օրհնությունը բերելով երիտասարդներին՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ նրանք կապված կմնան հայրենիքին ու Մայր Եկեղեցուն եւ իրենց ակտիվ ներգրավվածությամբ կշարունակեն զորացնել հայոց ազգային-հոգեւոր կյանքը։

Նորին Սրբության հետ զրույցում երիտասարդները հաստատեցին, որ ոգեւորված են երիտասարդական հավաքին մասնակցությունից եւ հայրենակիցների հետ ծա-

նոթությունից, իսկ հայրենիք ուխտագնացությունն իրենց համար նկատեցին մեծ փորձառություն։

Հուլիսի 4-ից 8-ը, «Դեպի հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» կարգախոսի ներքո, Հայաստանում կայացավ համահայկական երիտասարդական հավաք, որին մասնակցեց ավելի քան 20 երկրից շուրջ 400 եկեղեցասեր երիտասարդ, նրանցից 11-ը՝ Բրազիլիայի թեմից։

Արաբկիրի նորակառույց եկեղեցու համայնքի ուխտավորներին




Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արաբկիրի նորակառույց եկեղեցու համայնքի ուխտավորներին, ովքեր Մայր Աթոռ էին այցելել առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Բաբկեն քին։ Հայրապետյանի։

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ, որ Արաբկիրի համայնքն արդեն ունի եկեղեցի, որի օծումը տեղի կունենա առաջիկայում։ Ուխտավորների հետ զրույցում Հայոց Հայրապետն ընդգծեց, որ շնորհիվ իրենց աղոթքների է նաեւ, որ եկեղեցին վեր հանենց եւ այսօր իր կամարների

ներքո է համախմբում Արաբկիրի շրջանի հավատացյալներին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց եկեղեցու հոգեւոր հովիվին՝ նվիրյալ հոգեւոր սպասավորության համար։ Վեհափառ Հայրապետն իր ջերմ բարեմաղթանքներն ու սերը փոխանցեց ուխտավորներին՝ հորդորելով ամուր մնալ իրենց հավատքի մեջ։ Գարեգին Բ Կաթողիկոսը հայցեց, որ Տիրոջ օրհնությամբ եւ հավատքի զորությամբ նրանց կյանքում առատաճան բարի գործերը։



**Բրազիլիայի հայոց թեմի մի խումբ
երիտասարդների**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ թեմի առաջնորդ Նարեկ եպս Բերբերյանի։ Երիտասարդ ուխտավորները օրերս կայացած «Դեպի հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» համահայկական

երիտասարդական հավաքի մասնակիցներից էին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն արտահայտեց Բրազիլիայի ազգասեր եւ եկեղեցեցանվեր զավակների՝ Հայաստան կատարած այցի առիթով։ Իր հայրապետա-

15 հուլիսի **Եգիպտոսի եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմերի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եգիպտոսի հայոց թեմի հայկական ազգային վարժարանի սաներին, ովքեր Հայաստան էին ժամանել Թումոյի ամառային ճամբարին մասնակցելու նպատակով։ Սաներին ուղեկցում էր Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս Մնացականյանը։

Սրբազան հայրը Նորին Սրբությանը ներկայացրեց ուխտավոր հայորդիներին, անդրադարձավ Հայաստան կատարած այցի արդյունավետությանը եւ ուսումնական դասընթացի օգտակարությանը։

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդին, թեմական խորհրդի անդամներին եւ վարժարանի տնօրինությանը՝ ջերմեռանդ ծառայության, հայի ինք-

նության պահպանմանն ուղղված ծրագրերի եւ օգտաշատ մեծ նախաձեռնության կազմակերպման համար։

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով ուխտավոր հայորդիներին, ուրախությամբ հաստատեց, որ նրանք կվերադառնան Եգիպտոս՝ հայրենիքից ստացած հոգեւոր լիցքերով եւ ներշնչված երկրի պատմամշակութային արժեքներով ու սրբություններով։

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ քաղցր հուշերը կոգեշնչեն նրանց իրենց հետագա ուսումնառության մեջ, որպեսզի գերազանց սովորեն եւ իրենց արձանագրած հաջողություններով էլ ավելի բարձրացնեն հայ ժողովրդի պատիվը։

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Արամ Մանուկյանի արձանի բացմանը

Հունիսի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաղաքամայր Երեւանում ներկա գտնվեց Արամ Մանուկյանի արձանի բացման արարողությանը:

Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց ներկաներին:

Մեծարգո՛ր Վարչապետ Հայաստանի Հանրապետության, Սիրելի՛ր ներկաներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ, որ համախմբվել եք պետական-հասարակական մեծ գործիչ Արամ Մանուկյանի արձանի բացման առիթով:

Այս հանդիսավոր արարողությանը ոգեկոչվում է հիշատակը մեր ժողովրդի նվիրյալ ու վաստակյալ զավակի, ով մեր պատմությանը դժվարին ժամանակներում հերոսացավ հայրենյաց պաշտպանության մարտումներում, Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրության գործում բերած իր անդուլ ջանքերով ու կորուվով: Նա սերունդ դաստիարակող ուսուցիչ էր, որ դարձավ իր ժողովրդի իրավունքների պաշտպան, Վանի ինքնապաշտպանության ջահակիր ռազմիկ, Վանի նահանգապետ, մեր հայրենյաց արեւելյան փրկված հատվածում պետականության վերահաստատման առաջամարտիկ: Նրա անունը մեր ժողովրդի համար անբաժանելի է դարձել մեկ դար առաջ արձանագրված մա-



յիսյան հերոսամարտերի փառապանծ հաղթանակներից, անկախ պետականության վերակերտման պատասխանատվությունից ու ամբողջանվեր ջանքերից: Արամ Մանուկյանի արձանի բացումը Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի հայրուրամյակի այս տարում խորհրդանշական է՝ որպես երախտիք մեր ժողովրդի մեծ զավակին, որպես ազգամկրտունի ու հայրենասիրության ոգեշնչում այսօր ապրողներիս եւ մեր հետագա սերունդներին:

Այս արարողությունը, սիրելիներ, առիթ է ընծայում մեզ նաեւ անդրադառնալու եւ կարեւորելու, որ ցեղասպանության նախնիի միջով անցած մեր ժողովուրդը, առ Քրիստոս հավատքով, հարության անպարտելի հույսով կարողացավ վերագտնել իր քաջության ոգին եւ իր արի զավակների շնորհիվ, որոնցից մեկն էր Արամ Մանուկյանը, կերտեց իր նորագույն պատմության հաղթանակները: Մեր պատմության կարեւոր դրվագներից է Սարդարապատի հերոսամարտի նախօրեին Արամ Մանուկյանի հանդիպումը Գեւորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, երբ Մայր հայրենիքի պաշտպանության վճռականությունն ստանձնած նվիրյալ հայորդին ականատես եղավ նաեւ անմահանջ հոգեւոր ուժին Հայ Եկեղեցու եւ Հայոց Հայրապետի: Միասնական կամքով պայքարի էլած մեր ժողովուրդը հաղթանակեց՝ պաշտպանելով իր գոյության,

հայրենի հողի վրա ապրելու ու արարելու իր արդար իրավունքը: Արամ Մանուկյանը կարճ կյանք ունեցավ, բայց այն ամբողջությամբ ընծայեց պայծառ ու հզոր Հայաստանի, բարգավաճող իր ազգի, առաջընթաց հայ կյանքի վառ տեսլականի իրագործմանը:

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, մենք կոչված ենք Արամ Մանուկյանի, Հայաստանի առաջին Հանրապետությունը կերտած մեր հերոսների տեսիլքներն իրականություն դարձնելու, ընթանալու դեպի նորանոր իրագործումներ ու արարումներ՝ համուն հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի երջանկության, բարօրության ու բարգավաճման:

Այս հիշարժան առիթով հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության երախտարժան ներկայացուցիչ Արամ Մանուկյանի արձանի ծրագրի նախաձեռնողներին եւ իրականացնողներին, ինչպես նաեւ՝ բարերարներ Աշոտ Թունյանին եւ Գաբրիել Չեմբերջյանին, քանդակագործ Դավիթ Մինասյանին:

Թող Արամ Մանուկյանի լուսավոր կերպարը քաջալերություն ու ոգեշնչում լինի մեզ ամենքիս, ազգիս բոլոր զավակներին՝ Տիրոջ զորակցությամբ, միասնական ջանադրությամբ կերտելու հզոր պետություն՝ որպես ամուր վեմ ու պատվար մեր ժողովրդի նոր հաջողությունների, մեր արդար հույսերի ու մեր պայծառ ապագայի, այսօր եւ միշտ. ամեն:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց «Անդրանիկ» սկաուտական ճամբարի մասնակիցներին

Հունիսի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանու ներքո գործող «Անդրանիկ» սկաուտական ճամբարի 70 հայորդիների, որոնք Հայաստան էին ժամանել Իրանից, Իրաքից, Սիրիայից, Լիբանանից եւ Վրաստանից:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ ճամբարի ղեկավար Ռայմոնդ Հարությունյանն անդրադարձավ ճամբարի հայրենանվեր գործունեությանն ու առաքելությանը, ներկայացրեց ճամբարը Հայաստանում կազմակերպելու նպատակը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունը բերելով ճամբարի մասնակիցներին, այս առիթով իր գնահատանքը հայտնեց ՀԲԸՄ-ին՝ նման ազգօգուտ նախաձեռնություն կյանքի կոչելու համար:

Վեհափառ Հայրապետը կարեւորեց սկաուտական ճամբարային հավաքի անցկացումը Հայաստանում, որով տարբեր երկրներից ժամանած պատանի հայորդիներին լավագույն հնարավորություն է ընձեռնվում միմյանց ծանաչելու եւ հայրենիքի սրբություններին հաղորդակցվելու:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ այս մեկտեղումը հայրենիքում առավել

կզորացնի նրանց հոգիներում հայրենասիրության զգացումը եւ նախանձախնդրության ոգին, ինչպես նաեւ կամրապնդի հզոր ու լուսավոր Հայաստան կերտելու նրանց գիտակցությունը:

Նորին Սրբությունը հորդորեց պատանի սկաուտներին խանդավառված ու ոգեշնչված բիրիական Արարատով եւ հայրենյաց սրբություններով՝ իրենց վերադարձին նորանոր գիտելիքներ ամբարել եւ դրանք ի սպաս դնել համայնքային կյանքի զորացմանն ու հայրենաշինության սրբազան գործին:

Հայրապետն իր մասնավոր գնահատանքը փոխանցեց սկաուտների ծնողներին ու մանկավարժներին՝ հայրենասիրական ոգու եւ հայեցի դաստիարակության գործում ունեցած անուրանալի դերակատարության համար:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ սկաուտների հարցերին, որոնք վերաբերում էին Աստվածաշնչին, Հայոց Եկեղեցու պատմությանն ու դավանաբանությանը:

Հանդիպման ընթացքում «Անդրանիկ» սկաուտական ճամբարի մասնակիցները ուրախություն պարգեւեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կատարելով «Էրեբունի-Երեւան» եւ «Գետաշեն» երգերը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եսայ Բաբայանը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Մեքսիկայի նախագահին

Հունիսի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել տիար Անդրեաս Մանուել Լուպես Օբրադորին՝ Մեքսիկայի նախագահի պաշտոն ընտրվելու կապակցությամբ: Նորին Սրբության ուղերձում ասված է. «Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված զորակից լինի Ձեզ եւ արգասավորի Ձեր ջանքերը՝ ի նպաստ Մեքսիկայի շենության եւ Ձեր ժողովրդի բարօր կյանքի: Լիափույս ենք, որ Ձեր առաջնորդությամբ առավել արդյունավետ պիտի դառնան մեր երկու երկրների բարեկամական հարաբերությունները, որոնց խորացմանն ու զարգացմանն իրենց նպաստն են բերում նաեւ Մեքսիկայում ապրող մեր ժողովրդի զավակները:

Մեր մաղթանքն է, որ Ամենակալ Տերն Իր սուրբ Աջի հովանու ներքո պայծառության մեջ պահի Մեքսիկան ու օրհնի աստվածասեր Ձեր ժողովրդին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահ Օբրադորին մաղթել է հարաճող հաջողություններ՝ իր բարձր ու պատասխանատու առաքելության մեջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցել է Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետին

Հունիսի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցազիր է հղել Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին՝ վշտակցություն հայտնելով Տղիբուլիի հանքահորում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ:

Նորին Սրբության գրության մեջ ասված է. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր զորակցությունն ենք բերում Ձեզ եւ մեր եղբայր վրաց ժողովրդին՝ խորին ցավակցություն հայտնելով Տղիբուլիի հանքահորում վթարի հետեւանքով զոհվածների ընտանիքներին եւ հարազատներին:

Մեր աղոթքն է, որ երկնավոր մեր Հայրն Իր Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգավորներին եւ բարի ապաքինում պարգեւի վիրավորներին»:

Վեհափառ Հայրապետը հայցել է բարեգութ Տիրոջ մշտամնա օրհնությունն ու հովանին Վրաստանին եւ նրա բարեպաշտ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցազիր է հղել Աթենքի եւ Համայն Հունաստանի Արքեպիսկոպոսին

Հունիսի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցազիր է հղել Աթենքի եւ Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Հիերոնիմոսին՝ Աթենքի Ատտիկա շրջանում այրվող անտառային հրդեհների առիթով, որոնց զոհ է դարձել մի քանի տասնյակ քաղաքացի:

Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռի միաբանության անունից Նորին Սրբությունը վշտակցություն է հայտնել հույն ժողովրդին եւ զոհվածների ընտանիքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցազիր մեջ ի մասնավորի նշված է. «Ձեզ ենք հղում մեր ցավակցությունները եւ աղոթում Ամենակալ Աստծուն, որ Իր լույս օթեւաններում ընդունի զոհերի հոգիները՝ պարգեւելով սիրտին եւ մխիթարություն նրանց ընտանիքներին ու հարազատներին: Թող որ Աստծո օգնությամբ հույն ժողովուրդը կարողանա հաղթահարել այս դժվարությունները եւ ապրի խաղաղ ու ապահով»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց ՀՄԸՄ համահայկական 11-րդ բանակումի փակման արարողությանը



Հուլիսի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բյուրականում մասնակցեց Հայ մարմնակրթական ընդհանուր միության (Հոմենըթ-մեն) համահայկական բանակումի փակման արարողությանը: Չորս տարին մեկ անցկացվող ճամբարային հավաքին այս տարի մասնակցում էր շուրջ 1300 սկաուտ՝ աշխարհի 24 երկրից:

Նորին Սրբությունը, հայրապետական իր պատգամն ուղղելով հավաքի մասնակիցներին, ուրախություն հայտնեց հանդիպման առիթով եւ իր օրհնությունը փոխանցեց սկաուտներին: Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Սուրբ Էջմիածնի եւ հայոց հավատքի խորհրդին: «Մենք այսօր փառք ենք տալիս Աստծուն, որ շնորհիվ մեր հավատքի ու մշակույթի վերապրեցինք ամենածանր փորձությունները, վերապրեցինք նաեւ Հայոց ցեղասպանության ահավոր ոճիրը: Թեեւ եղեռնահար, բայց մենք կարողացանք վերակերտել հայոց անկախ պետականությունը հաղթանակներով, որ արձանագրեցինք Սարդարապատում, Ապարանում եւ Ղարաբաղի խաղաղությանը:

Այս տարի, բոլոր գիտեք, սիրելի հայորդիներ, որ համագլխին շուրջ տոնախմբում ենք Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակը, եւ այդ առիթով տակավին մեկ տարի առաջ Մենք 2018 թվականը հռչակեցինք Երիտասարդության տարի եւ հորդորեցինք մեր աշխարհասփյուռ թեմակալ առաջնորդներին, հոգեւոր հովիվներին, որ խրախուսեն ու քաջալերեն հայ երիտասարդներին այցելելու Հայաստան եւ զորանալու հայրենի մեր իրականությանը, հաղորդական հնարավորինս հարատւ դարձնել իր ներկայությունը այդ պատմական համայնքներում, որոնք իրենց անցյալի փառքով եւ ձեռքբերումներով հպարտությամբ են լցնում յուրաքանչյուր հայորդու սիրտն ու հոգին:

Մի մեր իրականությամբ, հաղորդ դառնալու մեր կյանքին, նրա հույսերին, դժվարություններին, մարտահրավերներին եւ այս հրամայականների առջեւ առավել ամրանալու հոգով ու զորանալու միասնականության մեջ, որովհետեւ մեր հույսերը մենք պիտի կարողանանք իրականության առաջնորդել, մարտահրավերները մենք պիտի կարողանանք հաղթանակի առաջնորդել միայն ու միայն ամուր հոգով, զորեղ հավատքով եւ հաստատուն միասնականությամբ»,- Եւքե Ամենայն Հայոց Կաթողիկոսը:


Նորին Սրբությունը վստահությամբ ընդգծեց, որ զգալով գործունե հայոց հողի, ուժը հայոց լեռների՝ երիտասարդները պիտի վերադառնան իրենց համայնքներ՝ զորացած ու ավելի հստակ պատկերացնելով իրենց առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Հայոց Հայրապետը կարեւորեց երիտասարդների նախանձախնդրությունը՝ սեփական նվիրյալ աշխատանքով զորացնելու հայոց

կյանքը, շենացնելու իրենց տեղական համայնքները, որպեսզի հայոց ազգը կարողանա հնարավորինս հարատւ դարձնել իր ներկայությունը այդ պատմական համայնքներում, որոնք իրենց անցյալի փառքով եւ ձեռքբերումներով հպարտությամբ են լցնում յուրաքանչյուր հայորդու սիրտն ու հոգին:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց ՀՄԸՄ կենտրոնական վարչության անդամներին այս գեղեցիկ համաժողովի համար, որի շնորհիվ հայորդիները, համախմբվելով հայրենիքում, առավել զորանում են իրենց գիտակցության մեջ, որ տերն ու զավակներն են հայրենի երկրի, ինչպես նաեւ կերտողները հայրենիքի եւ հայ ժողովրդի ապագայի:

Իր սերն ու օրհնությունը բերելով սկստուսներին՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերն Իր շնորհները հեղի նրանց կյանքից ներս, որպեսզի հաջողություններով առաջանան իրենց կյանքում՝ նվաճելով նորանոր բարձունքներ: Վերջում Գարեգին Բ Հայրապետը պատգամեց զորանալ եւ զորացալ մնալ Տիրոջ հետ:

Փակման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ Եսայ Խաչատրյանը, Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Մարգարիտ վրդ. Ամիրջանը, ՀՄԸՄ կենտրոնական վարչության ատենապետ Գառնիկ Մկրտիչյանը, ՀՀ Սփյուռքի փոխնախարար Բարկեն Տեր-Գրիգորյանը, «Փյունիկ» համահայկական հիմնադրամի նախագահ, Մայր Աթոռի բարերար Գաբրիել Չեմբերջյանը եւ ՀՄԸՄ վարչության անդամներ ու սկաուտական ճամբարի մասնակիցների ծնողներ:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց «Սիրի օֆ սմայլ» հիմնադրամի շնորհանդեսին

Հուլիսի 27-ին Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երեւանի «Մարիոտ» հյուրանոցում ներկա գտնվեց «Սիրի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի շնորհանդեսին:

Միջոցառման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայություն ցուցաբերեց իր հայրապետական օրհնությունն ու պատգամը:

«Սիրելիներ, Ուրախ ենք ողջունելու եւ հայրապետական Մեր օրհնությունը բերելու ձեզ՝ ամենքիդ, որ համախմբվել եք այս սրահում՝ մանկական քաղցկեղային հիվանդությունների բուժմանն ու կանխարգելմանը նպաստելուն կոչված «Սիրի օֆ սմայլ» հիմնադրամի գործունեության հանրահռչակման առիթով:

Օրհնյալ ու բարի նպատակով ենք մեկտեղվել միջոցառմանը այս հիմնադրամի, որի հոգաբարձուների խորհրդի նախագահ է ընտրվել պատանեկության տարիներից մեր եկեղեցական կյանքին մասնակից, եկեղեցու ազնիվ դուստր տիկին Աննա Հակոբյանը:

Մեր Սուրբ Եկեղեցու բարեսիրական գործունեությունն է այսօր Մեզ առաջնորդել այս կարեւոր միջոցառմանը: Դժվարին իրավիճակներում հայտնված մեր սիրասուն երեխաները եւ նրանց ծնողները ամենքիս զորակցության կարիքն ունեն: Կարիքավորներին օգնելը Տիրոջ կամքի իրագործումն է, ինչպես եւ ասում է Քրիստոս. «Եւմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. Իե 40): Այս վստահությամբ ու հավատով է, որ պետք է ամենքս ի կարի մերում սատարենք բարի նախաձեռնություններին եւ հատկապես՝ երեխաների առողջությանն ուղղված ծրագրերին:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երկրային Իր առաքելության ընթացքում բազմաթիվ մարդկանց բուժեց, նաեւ՝ հիվանդ մանուկների՝ անսալով նրանց ծնողների խնդրանքներին ու հավատքին:

Եկեղեցու հայրերը բժշկության մեջ աստվածային ներգործության վկայությունն են տեսնում: Սուրբ Մակար Մեծն ասում է. «Ով առողջացնում է անմահ հոգին, կարող է նաեւ բժշկել մարդկային մարմինը ժամանակավոր տառապանքից եւ հիվանդություններից»: Այս են վկայում նաեւ այսօր իրաջող կատարվող բժշկությունները: Շատ բժիշկներ վկայում են, որ բուժման ամենաբարձր իրավիճակներում զգացել են, որ Աստված է իրենց միջոցով գործում, եւ հաճախ մարդիկ՝ բժիշկ թե հիվանդ, այս ճանապարհով են գալիս առ Աստված:

Մեր Սուրբ Եկեղեցին տերունապատվեր իր առաքելության ընթացքում մշտապես կարեւորել է աջակցությունը կարիքավոր իր զավակներին: Ի դեմս «Սիրի օֆ սմայլ» հիմնադրամի՝ տեսնում ենք մեր ազգի ապագայի՝ երեխաների առողջությանը նպաստող կարեւոր մի նոր նախաձեռնություն, որին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը զորակցելու է, որպեսզի հույսը, կյանքի ուրախությունն ու պայծառ ժպիտը հավելվեն ապաքինված երեխաների եւ նրանց ծնողների ու մեր բոլորի սրտերում:

Գոհունակություն է Հայրապետիս համար, որ ուռուցքաբանության կենտրոնում ծառայում է եկեղեցական, ով կամավոր հոգեւոր խնամք եւ հոգածություն է մատուցում այնտեղ բուժվող երեխաներին, նաեւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում գործելու է մեր Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչը՝ հանձին Բագրատ Եսայ Գալստամյանի:

Վերստին հայրապետական Մեր օրհնությունը բերելով՝ մաղթում ենք հաջողություններ հիմնադրամի աշխատանքներին եւ աղոթում Մեր սիրելի զավակների ապաքինման համար: Հայցում ենք, որ ամենաբարձր Աստված ապաքինություն պարգևի բոլոր հիվանդներին եւ պահի ու պահպանի Իր բյուր օրհնությունների մեջ հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ ազգս հայոց»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր մշակումներ:

Արսեն քհն. Սարգսյանը, ազատվելով հայորդյաց տների տեսչի պարտականություններից, ծառայության է կոչվել Հարավային Ռուսաստանի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

Հրաչյա քհն. Գյուգալյանը, ազատվելով Բուլղարիայի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, հոգեւոր սպասավորությունը կշարունակի Արարատյան հայրապետական թեմում՝ առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո:

Կարգալույծ է հռչակվել Կորյուն աբեղա Առաքելյանը

Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Կորյուն աբեղա Առաքելյանը՝ եկեղեցականին անհարիր վարքագծի ու հակակառնական ընթացքի համար:

Տնօրինության համար հինք է ծառայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարգապահական հանձնախմբի եզրակացությունը, ինչպես

նաեւ սահմանված մեկշաբաթյա շրջանում զղջմամբ ու ապաշխարությամբ դարձի գալու հորդորի անտեսումը: Կարգալույծ է եկեղեցականն այսուհետ կոչվել աշխարհականների շարքին՝ Արմեն Առաքելյան ավագանի անունով:

Հիշեցնենք, որ հայտնի նախաձեռնության մեջ ընդգրկված Կորյուն աբեղայի եւ մի խումբ աշխարհականների պահվածքի եւ գործողությունների առնչությամբ՝

անցած շաբաթների ընթացքում իրենց անհանգստության եւ դատապարտության խոսքն էին հնչեցրել եպիսկոպոսաց դասը, բազմաթիվ եկեղեցականներ եւ հավատացյալներ ինչպես Հայաստանից, այնպես եւ Սփյուռքից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները հուլիսի 6, 2018 թվակիր խնդրագրով դիմել էին Վեհափառ Հայրապետին՝ կարգազանց հոգեւորականին պատասխանատու

վության ենթարկելու խիստ միջոցների ձեռնարկման վերաբերյալ:

Հուլիսի 10-ի Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում որոշում էր կայացվել Նորին Սրբության հորդորով մեկշաբաթյա վերջնաժամկետ սահմանել, որպեսզի անդադարձնի եւ մեկ առիթ ընծայվի նախաձեռնության անդամներին դադարեցնելու հակաանոմալական իրենց գործողությունները եւ վերադառնալու Սուրբ Էջմիածնի խնամակալ հովանու ներքո:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա

Հուլիսի 22-ի երեկոյան Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն):

Երկօրյա այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ, քննարկեց նրանց հոգածությամբ իրականացվող ծրագրերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Եգիպտոսի եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմերի ուխտավորներին

Սկիզբը՝ էջ 1

Գարեգին Բ Կաթողիկոսը հորդորեց ազգային վարժարանի սաներին համայնքային կյանքում իրենց ակտիվ ներգրավվածությամբ շարունակել ծաղկեցնել իրենց համայնքն ու տիրախման թեմը։ Նույն օրը Ամենայն Հայոց Հովվապետը

հանդիպեց նաեւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի Լոս Անջելեսի Ս. Հակոբ եկեղեցու ուխտավորների հետ՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Հարություն քին։ Թաշչյանի։

Ուխտավորները Մայր տաճարում մասնակցեցին Պատարագի, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ։

մարտահրավերներին ու խնդիրներին՝ հույս հայտնելով, որ դրանք եւս կհաղթահարվեն հայ ժողովրդի զորեղ հավատքի շնորհիվ։ Բուղեբազի պատգամավոր Քրիստոֆ Փլոսն իր հերթին տեղեկացրեց Հայաստան իր այցի մասին, որի նպատակն է նպաստել երկու երկրների տնտեսական, քաղաքական եւ մշակութային հարաբերությունների առավել

զարգացմանը։ Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ միջեկեղեցական հարաբերությունների, ի մասնավորի՝ Հայոց եկեղեցու եւ Գերմանիայի Լյութերական-ավետարանական եկեղեցու միջեւ կապերի մասին։ Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի միջեկեղեցական բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը։



Սփյուռքահայ ուսուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց աշխարհի 15 երկրից Հայաստան ժամանած 62 սփյուռքահայ ուսուցիչների, ովքեր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի նախաձեռնությամբ Հայաստանում մասնակցում էին վերապատրաստման մեկամսյա դասընթացների։

Տիար Ռուբեն Միրզախանյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը սփյուռքահայ ուսուցիչներին, տեղեկացրեց, որ համալսարանի մի շարք ուսանողներ իրենց փորձառության շրջանն անցկացնում են Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էռնեստեան հանրակրթական դպրոցում»։

Այնուհետեւ ուսուցիչներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեծապես կարեւորելով համալսարանի եւ ՀՀ պատկան կառույցների կարեւորագույն այս նախաձեռնությունը։ Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ տարեց-տարի Հայաստան ժամանող սփյուռքահայ ուսուցիչների թիվը մեծանում է։

Բարձր գնահատելով սփյուռքահայ ուսուցիչների նախաձեռնությունը՝ Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ մանկավարժները կարելի պատասխանատվություն են կրում այսօրվա եւ զավիթ սերունդների դաստիարակության ու կրթության համար, եւ հույս հայտնեց, որ այցը Հայաստան եւ մասնակցությունը դասընթացին ճորանոր լիցքեր կհաղորդի նրանց՝ նոր ուժով եւ ավյունով շարունակելու

ուսուցչական իրենց բարդ ու դժվարին առաքելությունը։

Զրույցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետն անդրադարձավ նաեւ Սփյուռքի առջեւ ծառացած արդի մարտահրավերներին՝ մասնավորապես խոսելով հայապահպանության, հայեցի դաստիարակության, ինչպես նաեւ մատաղ սերնդի մեջ աստվածսիրություն եւ հայրենասիրություն սերմանելու կարեւորության մասին։ Մարտահրավերների հաղթահարման գործում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց համագործակցությունը եկեղեցական կառույցների եւ ազգային կրթական հաստատությունների միջեւ։

Նորին Սրբությունը ներկաներին տեղեկացրեց «Գարեգին Ա» կրթական կենտրոնում Մայր Աթոռի կողմից Հայ եկեղեցու քահանաների համար նախաձեռնված վերապատրաստման դասընթացների մասին՝ հավելելով, որ առաջիկա տարում նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուսուցիչների համար։

Կաթողիկոսը պատասխանեց նաեւ հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Սփյուռքում գործող հայկական դպրոցների եւ մայրենի պահպանման խնդիրներին։

Վերջում Վեհափառ Հայրապետը մանկավարժներին մաղթեց Աստուծո օրհնությունն ու պահպանությունը՝ իրենց սրբազան առաքելության իրականացման գործում։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեորգ Եպս Սարոյանը։



27 հուլիսի Հնդկաստանի բուժման մեկնող հինգ զինվորականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տարբեր ժամանակահատվածներում ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած հինգ զինվորականների՝ կապիտան Միքայել Սարգսյանին, կապիտան Գնել Համբարձումյանին, զորացրված ժամկետային զինծառայողներ Նարեկ Մարությանին, Կարեն Համբարձումյանին եւ Գրիգոր Հովհաննիսյանին, ովքեր առաջիկա օրերին կմեկնեն Հնդկաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ ստանալու անհրաժեշտ բուժումը։

Քողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Իզմիր-լյան» բժշկական կենտրոնում հանդիպել էր ծանր վիրավորում ստացած 15 զինվորականների, ովքեր պրոթեզավորման նպատակով անհրաժեշտ զննության էին ենթարկվել Նորին Սրբության հրավերով Հայաստան ժամանած Գերմանիայի առաջատար «Օթթոբը» կլինիկայի՝ Հնդկաստանի մասնաճյուղի օրթոպեդ-վնասվածքաբանների կողմից։

Հանդիպման սկզբում ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես Եպս Աբրահամյանը հայցեց Նորին Սրբության օրհնությունը հայրենյաց պաշտպաններին։

Շարունակությունը՝ էջ 5



17 հուլիսի

Երեւանի թիվ 135 դպրոցի աշակերտներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի թիվ 135 դպրոցի մի խումբ աշակերտների՝ առաջնորդությամբ Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Նորայր ավգ քին։ Բաղդասարյանի։

Նորին Սրբությունն իր հայրական սերն ու օրհնությունը բերեց պատանիներին՝ ուրախություն հայտնելով համայն հայության նվիրական սրբավայր նրանց այցի առիթով։

Փոքրիկ ուխտավորների հետ զրույցում Վեհափառ Հայրապետը պատգամեց միշտ եւ ամենուր աղոթել՝ իրենց սրտում պահելով Սուրբ Էջմիածինը եւ նվիրական սրբությունները, որոնք հայ ժողովրդին ամրություն, ուժ եւ օրհնություն են պարգեւել։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը բերեց Նորայր քահանային՝ նվիրյալ ծառայության համար։



22 հուլիսի

Գերմանիայի Բուկոբեթազի պատգամավորին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բուկոբեթազի պատգամավոր դոկտոր Քրիստոֆ Փլոսին՝ ուղեկցությամբ «Կոմորադ Ադենաուեր» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներին։

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջպետական հարաբերությունները սերտանում ու զարգանում են՝ նպաստելով հայ եւ գերմանացի ժողովուրդների բարեկամական կապերի խորացմանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր երախ-

տագիտությունը հայտնեց Գերմանիայի իշխանություններին՝ Բուկոբեթազում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու համար։

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը հյուրին տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի առաքելության, հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական հավատի կարեւոր դերակատարության, Հայոց ցեղասպանության արհաւիրքների, ինչպես նաեւ եկեղեցու ներկա գործունեության մասին։ Անդրադարձավ Հայաստանի եւ Հայ եկեղեցու առջեւ ծառացած

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հնդկաստան բուժման մեկնող հինգ զինվորականների

Սկզբը՝ էջ 4

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, քաջարի ծառայության համար իր գնահատանքն ու օրհնությունը բերելով զինվորականներին, ընդգծեց, որ նրանք ամբողջական ավերակներ են մատուցել հայրենիքին, պաշտպանել հայ ժողովրդին եւ անառիկ պահել երկրի սահմանները:

Հայոց Հայրապետը հաստատեց, որ հայրենիքին հայրենասիրությամբ ու նվիրումով ծառայելու ոգին է հայ ժողովրդին մշտապես հաղթանակներ պարգևել, ապահովել երկրի խաղաղությունն ու բնականոն զարգացումը, հնարավորություններ ընծառել իրականություն դարձնելու հայրենիքի երազանքները:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ երիտասարդները միեւնույն ոգով կշարունակեն անձնավիրաբար ծառայել եւ իրենց ազգաշեն գործերով կնապաստեն հայ ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքի կերտմանը:

Անդրադառնալով արտերկրում նրանց բուժման կազմակերպմանը՝ Նորին Սրբությունը

հաստատեց, որ դա նվազագույնն է, որ Հայոց եկեղեցին կարող է անել քաջարի զինվորականների համար՝ ի դիմաց իրենց անձնագրի նվիրյալ ծառայության:

Իրենց հերթին զինվորականները եւս երախտագիտություն հայտնեցին Վեհափառ Հայրապետի հոգածու վերաբերմունքի եւ ստանձնած խնամատարության համար:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատմանը բերեց նաեւ զինվորականների ծնողներին՝ նման զավակներ կրթելու ու դաստիարակելու համար՝ վստահեցնելով, որ յուրաքանչյուր հայորդի իր խոնարհումն է բերում քաջարի զինվորներին՝ նրանց հերոսական ոգու համար:

Նորին Սրբությունը մաղթեց, որ ամենակալ Տեղեւ իր հարատեւ օրհնության ներքո պահի արիասիրտ հայորդիներին, որպեսզի իրենց կյանքն ապրեն խաղաղության մեջ:

Հանդիպումը փակվեց Տեղեւական աղոթքով, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկաներին:

Այցը կազմակերպվել է 2018 թվականը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից երիտասարդության տարի հռչակվելու կապակցությամբ:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ Վահան սրբազանը ներկայացրեց ուխտավորներին, ինչպես նաեւ խոսեց Հայաստան այցից ստացած տպավորությունների մասին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, ողջունելով Մայր Աթոռ ուխտի եկած հայորդիներին, ուրախությամբ նշեց, որ նրանց այցը Հայաստան եւ Սուրբ Էջմիածին կատարվել է հայ ժողովրդի համար խորհրդանշական տարում, երբ ոգեկոչվում են Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակները: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ ֆրանսահայ ուխտավորները կվերապրեն այդ պատմական իրադարձությունները, կգործնեն իրենց հայրենասիրության մեջ եւ առավել կարծեստեղծ անկախ պետականության գաղափարը:

Հայոց Հովվապետը կարեւորեց հայ ինքնության եւ մայրենիի պահպանությանն ուղղված ծրագրերը, հորդորեց ֆրանսահայերին իրենց զավակներին կրթել ու դաստիարակել հայեցի

ոգով, նախնայաց սուրբ հավատքով, ինչը հայի գոյության գրավակն է:

Վեհափառ Հայրապետը վստահությամբ ընդգծեց, որ այցից ստացած տպավորությունները երկար ժամանակ ուղեկիցը պիտի դառնան իրենց կյանքի եւ առանձնահատուկ խանդավառությամբ կփոխանցվեն իրենց զավակներին, ծնողներին, ընկերներին եւ ազգականներին:

Հանդիպմանը Գարեգին Բ Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը փոխանցեց առաջնորդ Վահան սրբազանին եւ թեմի հոգեւորականներին՝ անձնորդի ու նվիրյալ ծառայության համար՝ մաղթելով ուժ, կորով եւ Սուրբ Հոգու առաջնորդություն իրենց սրբազան առաքելության մեջ: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց «Արարատ» պարային խմբի անդամներին՝ իրենց ոգեշնչող ելույթի համար:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը ֆրանսահայ ուխտավորներին մաղթեց, որ հայրենիքի հանդեպ սերը բերեք չափափակ նրանց հոգիներում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի փոխհիվանդատ Դարթեւ վրդ. Բարսեղյանը:



ԱՄՆ արեւելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Բոսթոնի շրջանի Հայփոյնթ համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Վարդ քնն. Գյոզալյանի եւ ուղեկցությամբ նույն տարածաշրջանի Կաթողիկ եկեղեցու հոգեւոր հովիվ հայր Ջոն Դիլեյնիի:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը՝ Վարդ քահանան ներկայացրեց ուխտավորներին, ինչպես նաեւ անդրադարձավ հայր Ջոն Դիլեյնիի այցին, ով մշտապես իր զորակցությունն է բերել Բոսթոնի հայ համայնքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրապետական օրհնությունը բերելով ուխտավորներին, իր բարեմաղթանքները հղեց նրանց եւ

հույս հայտնեց, որ այս ուխտագնացությունը կնպաստի նրանց հոգեւոր կյանքի զորացմանը:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Հայ եւ Կաթողիկ եկեղեցիների ջերմ հարաբերություններին եւ հովվապետների փոխադարձ այցելություններին՝ կարեւորելով սերտ համագործակցությունը տարբեր մակարդակներում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքի խոսքերն ուղղեց հայր Ջոնին՝ Բոսթոնի Հայփոյնթի համայնքին ցուցաբերած զորակցության եւ աջակցության համար:

Հանդիպման վերջում ուխտավորներն իրենց երախտագիտությունը հայտնեցին Գարեգին Բ Հայրապետին՝ հայրական օրհնության, բարեմաղթանքների եւ ջերմ ընդունելության համար:



30 հուլիսի «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» ընկերակցության անդամներն

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Ֆրանսիայի Մարսել քաղաքի «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» ընկերակցության ներկայացուցիչներին՝ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Զովհաննիսյանի եւ ընկերակցության ղեկավար պրն Պասկալ Շամայանի ուղեկցությամբ:

Ողջունելով մշակութային միության անդամներին, սաներին եւ ուսուցիչներին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հովվապետական այցի ընթացքում ընկերակցություն կատարած իր այցելությանը եւ այն կարեւոր ջանքերին, որ այն գործարդում է՝ մատաղ սերունդին հայեցի կրթության եւ դաստիարակության ապահովման, ազգային ոգու եւ գիտակցության պահպանման ուղղությամբ:

Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունը բերեց պատանիներին՝ հորդորելով պահպանել իրենց ազգային ինքնությունը եւ շարունակել ապրել Ֆրանսիայում՝ իբրեւ ազ-

գի հավատարիմ զավակներ, որպեսզի իրենց կյանքը դառնա հպարտություն յուրաքանչյուր հայորդու համար: Գարեգին Բ Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ ուխտագնացությունը հայրենիք, հաղորդ դառնալը հարազատ ժողովրդի պատմությանը եւ բազմադարյա ժառանգությանը նորովի պիտի բացահայտի իրենց ինքնությունը՝ ոգեւորելով եւ մերշնչելով հարազատ մնալու ազգային արժեքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գնահատանքը փոխանցելով ընկերակցության վարչության անդամներին եւ նախագահին, պատգամեց շարունակել հայապահպանությանն ուղղված օրինյալ ծառայությունը:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Հովվապետի հոգեւոր կյանքի եւ սպասավորության առաջին քայլերին, առաջիկա հովվապետական այցերին եւ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի գործունեությանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ



29 հուլիսի

Արգենտինայից ժամանած երիտասարդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Արգենտինայի հայոց թեմի «Ա. Գրիգոր Լուսավորիչ» կրթարանի, «Դերձակյան» եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանների աշակերտներին ու նրանց ծնողներին, որոնք Հայաստան են ժամանել 2018 թվականն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից երիտասարդության տարի հռչակվելու կապակցությամբ: Արգենտինահայերին ուղեկցում էր Բուենոս Այրեսի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Մաղաքիա վրդ. Ամիրյանը:

Հանդիպումն սկսվեց Տեղեւական աղոթքով, որից հետո հայր Մաղաքիան, Նորին Սրբությանը ներկայացնելով արգենտինահայ աշակերտներին, ընդգծեց, որ այս ուխտագնացությունը վկայությունն է Հայոց եկեղեցու եւ Ամենայն Հայոց Հայրապետի հանդեպ հավատարմության, ինչպես նաեւ առիթ՝ հայրենիքի կարոտն առնելու: Հայր սուրբը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց նաեւ համայնքներում տարբեր բարեփոխական ծրագրերի աշակերտների մասնակցության մասին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունն ու սերը փոխանցելով Արգենտինայից ժամանած հայորդիներին, ուրախությամբ հաստատեց, որ արգենտինա-

հայ համայնքը Սփյուռքի ամենակազմակերպված համայնքներից է, ուր տիրապետող են հայկականության գիտակցությունն ու ոգին:

Նորին Սրբությունը, գոհունակությամբ հիշելով իր հովվապետական այցերը Արգենտինա, հաստատեց, որ հայկական տարբեր համայնքներ այցելելիս ակնառնեսն է դարձել արգենտինահայերի զորավոր հավատքի, հայ կյանքի կերտմանն ու հայի ինքնության պահպանման գործում իրենց ներդրումը բերելու հայորդիների ազնիվ ձգտման:

Գարեգին Բ Կաթողիկոսը հորդորեց երիտասարդներին իրենց նախնայաց օրհնակով լինել ազգասեր եւ եկեղեցամկեր, մշտապես զորացնել համայնքային կյանքը, իրենց զորավոր հավատքով հաղթահարել ժամանակակից մարտահրավերները եւ պահպանել ազգային շունչն ու ոգին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց Արգենտինայի հայոց թեմի հոգեւորականաց ողջ դասին, ՀԲԸՄ-ին եւ համայնքների վարչությունների անդամներին՝ նվիրյալ ծառայության եւ արգենտինահայ երիտասարդությանը հայեցի դաստիարակություն ապահովելու համար:

Վերջում Նորին Վեհափառությունն Աստծո օգնականությունն ու առաջնորդությունը մաղթեց արգենտինահայությանը:



Ֆրանսահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Փարիզի առաջնորդամիստ Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու ուխտավորներին, Իսի-լե-Մուլիմոն քաղաքի հայկական Ս. Մարիան Աստվածածին

եկեղեցու հովանու ներքո գործող «Արարատ» պարային խմբին եւ համայնքի վարչության անդամներին՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Զովհաննիսյանի եւ թեմում սպասավորող հոգեւորականների:

Սսի 1243 թ. Բ Ժողովն ու կանոնները



Սկիզբը՝ թիվ 9-12

Բարեկարգական կանոններ

ԺԴ. «Հաղորդությունն առանց բուրվառի ու մոմեղենի չպետք է տանեն հիվանդների մոտ, այլ մեծ երկյուղածությամբ. իսկ ժողովուրդն իրավունք չունի, որ կամենա, թե ում ծովսը լինի, այլ պետք է լինի այնպես, ինչպես եպիսկոպոսն է հրամայում» (*Կիրակոս Գանձակեցի, մույն տեղում*):

Կանոնը հրամայում է հաղորդությունը հիվանդներին առանց բուրվառի ու մոմեղենի չտանել, ինչը որ բավական դժվար պետք է լիներ Կիլիկիայից դուրս: Թերեւս ավելի կարեւոր է մույն կանոնի երկրորդ մասը, որը նաեւ առանձին կանոն կարող

է համարվել, ինչպես ոմանք բաժանում են (*Միքայել Չամչյանց, Պատմություն Հայոց, հատոր 9, եր., 1984, էջ 228*): Այդ երկրորդ մասը ծխատարության կարգն է որոշում: Կանոնը սահմանում է, որ ծխատարի ընտրությունը պետք է կատարի եպիսկոպոսը, եւ ոչ թե ժողովուրդը որոշի եւ նրա կամքով լինի: Հարկ է նշել, որ ծովսը հիմնապես հարուստ լինելու սկզբունքն է, որը բավական երկար պահպանված էր եւ քաղաքների մեջ էլ հաստատուն պահվում էր: Սակայն կանոնը մեզ ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանում դա բոլորովին մոռացված էր:

Մեր կարծիքով՝ կանոնի առաջին մասը պետք է հենց վերաբերեր Կիլիկիայից դուրս

գտնվող շրջաններ գնացող հոգեւորականներին: Սակայն հասկանում ենք, որ դա իր հետ լուրջ խնդիրներ կարող էր հարուցել, բայց, փաստորեն, դա հակասում էր եկեղեցական կանոնադրությանը: Ի մի բերելով այս կանոնի էությունը՝ հասկանում ենք, որ մա հիմնապես լուծում էր երկու խնդիր՝ փորձելով բարեկարգել Հայաստանի ու Հայ եկեղեցու վիճակը:

Բարոյական կանոններ

Բարեկարգական կանոններին հաջորդող կանոններից մի քանիսը բարոյականությանն են վերաբերում: Ամփոփ կներկայացնենք դրանց էությունը:

ԺԵ. «Եպիսկոպոսներն ու քորեպիսկոպոսներն առավել ջանք պետք է թափեն՝ պոռնիկներին, շնացողներին, կախարհներին եւ ամեն կարգի հանցավորներին գեհեմի երկյուղով դարձի բերելու համար: Իսկ դարձի չեկողներին մարմնական ու հոգեւոր պատիժներով պետք է խրատել ու տուգանել, մանավանդ այնպիսիներին, որոնք ամուսինների միջեւ են մտնում կամ անառակ կին են պահում կամ օրինավոր կինը թողնում եւ անառակների մոտ են գնում կամ ատելության հետեւանքով թողնում են կանանց՝ առանց պոռնկության պատճառի: Այդպիսիներին առանց խղճալու անողորմ պատժով պետք է խրատել: Իսկ եթե պատվավոր մարդ է եւ եկեղեցու օրենքներին լրբաբար ընդդեմ է խոսում, թագավորը պետք է հիշատակի նրա հայտնի հանցանքը, իսկ իշխանները հանդիմանեն. եթե

չխրատվի, պետք է նզովվի: Եթե կինը լրբանա, ամուսնացած կամ ազապ տղամարդու խաբի, պետք է քահանան խրատի» (*Կիրակոս Գանձակեցի, մույն տեղում*):

Ինչպես պարզ է դառնում կանոնից, այն վերաբերում է անբարոյական եւ վարքից թույլ մարդկանց: Նրանց խրատելու գործում շատ կարեւորում է եպիսկոպոսների ու նրանց օգնականների՝ քորեպիսկոպոսների դերը: Եվ նրանք պետք է բացատրեն նրանց իրենց սխալ վարքը եւ փորձեն դարձի բերել: Կանոնից պարզ է դառնում, որ տվյալ ժամանակաշրջանում եղել է նմանատիպ խնդիր, որը շատ կատար էր ոչ միայն հոգեւոր, այլեւ բարոյական տեսանկյունից: Կանոնը նաեւ սահմանում է, որ եթե նրանք չխրատվեն դժոխքի վախից, պետք է նրանց խրատել մարմնական ու հոգեւոր պատիժներով, նաեւ պետք է տուգանել: Փաստորեն՝ լուրջ բարոյական խնդիրներ կային այդ ժամանակ, եւ Սսի 1243 Բ ժողովի ԺԵ կանոնը լուծում է տալիս այդ բարդ խնդիրն եւ այսպիսով փորձում կարգավորել երկրի բարոյական վիճակը: Պակաս կարեւորություն չի ներկայացնում կանոնի հաջորդ հատվածը, որը սահմանում է, որ եթե մարդը պատվավոր է, սակայն խոսում է եկեղեցու օրենքների դեմ, թագավորը պիտի հիշատակի նրա հանցանքը, իսկ իշխանները հանդիմանեն: Եվ եթե չխրատվի, պետք է նզովվի: Օրմանյան սրբազանն ասում է, որ խրատելն այստեղ գանակոծությունն է (*Օրմանյան Մ., Բ, ս. 1906*):

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Սկիզբը՝ թիվ 12

Պահենք մեր ուժերը, որովհետեւ ծնողները, օրինակ, երբեք չեն հանգստանում: Մայրը հանգստի ժամանակ էլ անում է այն բոլոր գործերը, որ անում է ողջ տարին: Իհարկե, կյանքը մի քիչ փոխվում է. երեխան դարձնում է զնուն, ազատ է շատ պարտականություններից, բացի, անշուշտ, այն երեխաներից, ովքեր ավարտական դասարանում են: Սա էլ մի տառապանք է. բոլորը հանգստանալու են գնում, իսկ դու նստած ես տանը, դու, որ հայր կամ մայր ես, որովհետեւ երեխադ ավարտական դասարանում է ու խեղդված դասերի մեջ: Սակայն համբերությամբ արեք այդ ամենը: Գիտեմ, որ սիրուց եք դա անում, եւ գիտեմ, որ չեք տրտնջում, որովհետեւ ձեր մեջ ասում էք. «Հալալ է երեխայիս, ամեն ինչ կանես նրա համար»: Այդ սերը, որ ունեք, զովացնում է ձեր հոգին: Քո արածը զոհաբերություն է, որովհետեւ հիմա քաղաքում նստած՝ տապալկվում ես հանուն երեխայիդ եւ ասում. «Ինչպես երեխայիս մեռակ թողնեմ, ի՞նչ կերակուր կպատրաստի նրա համար, ի՞նչ լվացք կանի, ի՞նչ կիոգա նրա կարիքները»: Դա, իմացիր, որ հովացնում է հոգիդ, թեկուզ շոգին, թեկուզ արդուկ անելիս: Պատկերացրու կնոջը՝ այս շոգին արդուկը ձեռքին. այրվում է սենյակը, այրվում է եւ ինքը: Սակայն եթե դա սիրով է անում, ուրախությամբ, զոհաբերության զգացումով, որպես ծառայություն Տիրոջը, երեխային՝ այն արարածին, ում Աստված է իրեն տվել, որ մեծացնի Քրիստոսի համար, հով կզա հոգու վրա, քնքշանք երեխայից, «շնորհակալություն», որը կարող է եւ չասել բառերով, բայց ասել հայացքով. սովորի՞ր հայացքի լեզուն, կարող է եւ համբույրով ասել կամ զգվանքով: Այո, այդպես էլ ենք շնորհակալություն ասում: Այս ամենից միթե չի հովանում քո հոգին, եւ ասում ես. «Այսպես ամբողջ տարի տանը նստած արդուկ եմ անում ու թեկուզ եւ հոգնեմ, դու լավ եղիր, զավակս»: Տեսնում եք՝ ինչպես է անմիջապես փոխվում մեր տրամադրությունը, թեկուզ շոգին:

Ընդհանուր առմամբ՝ առանց մեր կյանքը փոխվում է, մի փոքր շեղվում սովորականից: Ոմանք չգիտեն՝ ինչով զբաղվեն, իսկ ոմանք ժամանակ չունեն, ոչինչ չեն հասցնում գործերի պատճառով: Կարծում եմ՝ հասկանում ես, որ հիմա, երբ խոսում

եմ, այլ կերպ ես զգում: Բայց մեկ ուրիշը կողքի տանը, կողքի գյուղում, քաղաքում, երկրում չի զգում քեզ պես, չի ապրում ամառը, ինչպես դու ես ապրում: Դու հանգստանում ես ու ասում. «Լսեմ այս հաղորդումը, ուրիշ էլ ինչ անելիք ունեմ, համ էլ ժամանակը կանցնի», ոմանք էլ ինձ ասում են. «Այս կերպ է լցվում մեր օրը. հաղորդումներ ենք լսում», իսկ մեկ ուրիշը շատ կուզենա, բայց չի կարող լսել, քանի որ պետք է աշխատի, կարդա, սովորի, պետք է վազի, լուրջ գործեր ունի: Սակայն բոլորն էլ մի պահ ամռանը խաղաղվում են, գտնում են մի պահ հանգստանալու համար: Ձմռան մեծ չէ, երբ հիմնականում լարված ենք, հիմա ավելի շատ ժամանակ ունենք, բոլորս էլ ազատ ժամանակ կգտնենք մի տեղ գնալու, մեկի հետ խոսելու: Ձգուշանանք ամռանը այս հանգստի վիճակից, որը հաճախ գրգռվածություն է ստեղծում տանը: Ձգուշանանք, որովհետեւ բոլորս տանն ենք, ավելի քիչ ենք բացակայում տնից եւ հանդիպում ենք ավելի հաճախ: Եվ այդ ժամանակ տեսնում ենք, որ դեռ չենք սովորել հանդուրժել միմյանց: Շոգը թուլացնում է քեզ, շփումը մյուսների հետ՝ դժվարացնում կյանքը: Երբ բացակայում ես տնից, մոռացության ես տրվում, երբ բացակայում ես, անընդհատ կողքիդ մեկը չկա: Բայց երբ մայրը շարունակ տեսնում է երեխային, երբ ամուսինը հաճախ է լինում տանը, սկսվում են բախումները: Ձգուշանանք ամառվա կոիվներից, գրգռվածությունից: Այո, դու հիմա խաղաղ նստած ես, բայց կամ մարդիկ, որ կռվում են... Եվ կռվում են հատկապես ամռանը, որովհետեւ ամռանը ժամանակ ունեն խոսելու եւ իրար չհասկանալու: Երբ գործերը շատ են, չեն հասցնում: Մեկն ինձ ասաց. «Ամբողջ ձմեռ ծնողներիս տանը չեմ տեսնում, միայն երեկոներն են տեսնում, եւ առիթներ չեն ստեղծվում հասկանալու, թե արդյոք կարող եմ հանդուրժել կողքիս մարդուն: Ամռանն սկսում եմ հասկանալ նրանց բնավորության դժվարությունները, բախումներ են լինում, խոսքեր են հնչում, որ վիրավորում եմ դիմացիմին ու դժվարացնում ապրելը մի հարկի տակ»:

Եվ մտածում ես. միթե սա ամառ է: Թող ձեր սրտերում, ձեր տանը լինի իսկական ամառ՝ այս զեղեցիկ բառի բուն նշանակությամբ, որ նշանակում է «լավ եղանակ»:



Կարող է եւ օդափոխիչ չունենաք, չնայած այսօր բոլորն օդափոխիչ ունեն, դա դարձել է առաջին անհրաժեշտության իր, ինչպես ջեռուցիչը, եւ այլեւս բարեկեցիկ կամ ժամանակակից լինելու նշան չէ, եւ սակայն... կարող է եւ օդափոխիչ չունենաք, բայց ասեք. «Կարելու չէ, օդափոխիչ չունենք, փող չունենք գնելու, բայց մեր տանը ամառ է: Շոգ է, եւ ջերմաչափը բարձրանում է շարունակ, հասնում 38, 39, 40 աստիճանի, բայց տանն իշխում են սերն ու խաղաղությունը»: Գեղեցիկ ամառ է, եթե խաղաղություն ունես մեջդ: Եթե պատրաստվում ես կռվել կնոջդ, երեխաներիդ հետ, ինչ ամառ է դա. ամառ՝ ձմեռային, ձմապատ սրտերով, սառը հոգիներով, տանջված հայացքներով, առանց ուրախության, առանց սիրու... եվ կռիվների համար զանազան թեմաներ կան. կռվում ենք մուլմիսկ, թե որտեղ ենք գնալու հանգստանալու. «Եթե նախընտրում ես գնալ գյուղ՝ մորդ մոտ, ես էլ մեր կղզին կգնամ» եւ այլն: Սիրելիս, աշխատիր ամառը լավ անցկացնել, աշխատիր խաղաղվել, հանգստանալ: Սա իմ մաղթանքն է քեզ, քանի որ ունես դրա կարիքը: Տարվա ընթացքում այնքան բաներ եմ տեղի ունեցել քո եւ ընտանիքիդ կյանքում, աշխատանքիդ վայ-

րում, որը ձմեռ լարվածությունը հոգնեցրել է քեզ, սպառել: Այժմ կարիք ունես հանգստանալու: Եթե հիմա, երբ ամառ է, չհանգստանաս, եւ արագ քայլերով վրա հասնի աշունը, ու մորից մտնենք կյանքի սովորական ընթացքի մեջ, ուժ չես ունենա այդ լարված առօրյային անցնելու: Հիշում եք, երբ Տերը սուրբ առաքյալներին ուղարկեց մի փոքր շրջագայության, նրանց վերադառնալուց հետո ասաց. «Եկեք... մի քիչ հանգստացեք» (*Մարկ. 2. 31*):

Կամ մարդիկ, որ չեն կարող հանգստանալ մուլմիսկ ամռանը. դա իրենց արյան մեջ է: Ձմռանը տրտնջում եմ՝ ասելով. «Գործերս շատ են, ոչինչ չեն հասցնում, ինչպես կուզեի արձակուրդ ունենալ, հանգստանալ»: Սրանք պարզապես բառեր են, իրականում նրանք արդարացում են փնտրում իրենց անհամազհատ վիճակի համար՝ մեղավոր համարելով գործերը: Ամռանը պետք է ընկալես բնության ռիթմերը, Աստծու աշխարհի ռիթմերը: Տեսնում ես, որ բնությունն էլ է տեղեկացնում, որ հանգստանալու, դադար տալու, արգելափելու ժամանակն է, քեզ ասում է՝ «խաղաղվիր, հանգստացիր, հանդարտվիր»:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՇԽԱՆՈՒՂԻ ԱԼՄԱՍՏԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՂԻՆ՝ ՄԱՐԻԱ ՄԱԿՍԱԿՈՎԱ

(Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ստեղծման 90-ամյակի առթիվ)

Կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի՝ իր սքանչելի «Ալմաստ» օպերան երեւանում բեմադրելու երազանքը նրա կենդանության օրոք (1871-1928 թթ.) չէր տարիներին, երբ նա արդեն երեւանում էր ապրում (1924-28 թթ.) եւ ավարտել էր օպերայի ստեղծման աշխատանքները, մեր մայրաքաղաքում դեռ օպերային թատրոն չկար (ստեղծվեց 1932-ին, առաջին ներկայացումը՝ «Ալմաստ», կայացավ 1933-ի հունվարի 20-ին): Մինչ մեր հանրապետությունում օպերային թատրոն կստեղծվեր, «Ալմաստի» առաջին բեմադրությանը ձեռնամուխ եղավ ԽՍՀՄ Մեծ թատրոնը: Նպատակ ունենալով ներկայացնելու ԽՍՀՄ ժողովուրդների երաժշտական մշակույթը՝ Մեծ թատրոնի գեղարվեստական խորհուրդը հայկական երաժշտադրամատիկական երկերից ընտրեց հենց Սպենդիարյանի այս մեծարժեք ստեղծագործությունը: Եվ ահա 1930 թ. հունիսի 23-ին Մեծ թատրոնի ֆիլիալում ռուսերենով առաջին անգամ կատարվեց «Ալմաստը»: Երաժշտասեր հանրությունը խանդավառությամբ ընդունեց օպերան: Զերմ էր նաեւ մամուլի արձագանքը: Բարձր գնահատվեց հատկապես գլխավոր Ալմաստի դերակատար Մարիա Մակսակովայի ինքնատիպ մեկնաբանությունը: Բեմադրիչ ռեժիսորներ Վ. Բերուտովը եւ Տ. Շարաշինը, դիրիժոր Լ. Շոյնբերգը, խորմեսյտեր Վ. Ստեպանովը, բալետմետրեր Վ. Յապլինը եւ Ա. Մեսսերն արել էին ամեն ինչ, որ բեմադրությունը կայանա պատշաճ մակարդակով: Ձեւավորող նկարիչն էր Ռ. Մակարովը: Առաջին ներկայացման ժամանակ Մ. Մակսակովայի խաղընկերներն էին Գ. Պիրոգովը (Նադիր շահ), Աճ. Իվանովը (Թաթուլ իշխան), Ա. Ալեքսեևը (շեյխ եւ աշուղ) եւ հեղինակավոր այլ արտիստներ, որոնց անզուգական խաղը եւս մեծապես նպաստեց ներկայացման հաջողությանը: Երեք տարի շարունակ այս օպերան պարբերաբար ներկայացվում էր Մեծ թատրոնի բեմում: Այդ ընթացքում երաժշտասեր հանրությանն Ալմաստի դերով մի քանի անգամ ներկայացավ նաեւ Բ. Չլատազորովան, իսկ Թաթուլի դերով՝ Ի. Բուրլակը եւ Լյուբչենկոն, Նադիր շահի դերով՝ Վ. Լյուբչենկովը: Սպենդիարյանի այս հիասքանչ օպերան անշուշտ կարելու եղավ Մեծ թատրոնի երգիչների ստեղծագործական կյանքում: Իսկ անվանի երգչուհի, հետագայում (1971-ից) ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Մարիա Մակսակովան իր հուշերում գրեց. «Ես օպերայի գլխավոր դերերգի՝ Ալմաստի առաջին դերակատարն էի. սկզբում դժվարանում էի գտնել երաժշտական կերպարի հիմնական գիծը: Այնքան ամեն բան տարբեր էր այն բոլորից, ինչ մինչ այդ կատարել էի ես» («*Անվտակյան արվեստ*» հանդես, 1971, N 10):

Մարիա Պետրովնա Մակսակովան ծնվել էր 1902 թ. Աստրախանում: Մանկության տարիներին երգել էր եկեղեցական երգչախմբում, ապա սովորել նաեւ Աստրախանի երաժշտական ուսումնարանում: 1919-ից



հանդես էր գալիս Աստրախանի օպերային արտիստական խմբում՝ կատարելով Օլգայի դերերգը Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում: 1921 թվականին դառնալով անվանի երգիչ (բարիտոն) եւ մանկավարժ Մակսիմիլիան Մակսակովի (իսկական անուն-ազգանունը՝ Մակս Շվարց) աշակերտը՝ երիտասարդ երգչուհին լուրջ հաջողությունների է հասնում: 1923-53 թթ. նա Մեծ թատրոնի մեծերգչուհի էր, 1925-27 թթ. զուգահեռաբար հանդես էր գալիս նաեւ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) օպերային թատրոնում: Քնարական նրբերանգներով հարուստ, հնչելու ու գեղեցիկ ձայնի (մեցցո-սոպրանո), արտիստական վառ խառնվածքի շնորհիվ Մակսակովան ժամանակի ընթացքում խորհրդային Միության սիրված երգչուհիներից մեկը դարձավ: Նրա հաջողված դերերից էին Մարֆան՝ Մուսորգսկու «Խովանշչինա» օպերայից, Լյուբաշան՝ Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայից, Ամներիսը՝ Վերդիի «Աիդա» օպերայից, Դալիլան՝ Մեն-Սանսի «Սամսոն եւ Դալիլա» օպերայից, Կլարիչեն՝ Պրոկոֆևի «Սեր առ երեք նարինջները» օպերայից, Ալմաստը՝ Սպենդիարյանի համանուն օպերայից: Հանդես գալով պետական տարբեր մկագախմբերի հետ՝ Մակսակովան կատարում էր նաեւ ռուս եվրոպացի կոմպոզիտորների ռոմանսներ: Նա բազմիցս խորհրդային երգարվեստը ներկայացրել է նաեւ արտասահմանյան բեմերում՝ համերգներով հանդես գալով Թուրքիայում (1935 թ.), Լեհաստանում (1936 թ.), Ֆրանսիայում (1950 թ.), Գերմանիայում (1968-69 թթ.): Բայց, իհարկե, նրա կյանքում ամենալի կարելու է եղել Ալմաստի դերերգը, եւ այդ մասին իր հուշերում գրել է. «Ալմաստի դերերգն այն ժամանակ համապատասխան էր ինչպես հասակիս ու տարիքիս, այնպես էլ ձայնիս՝ լիրիկական մեցցո-սոպրանո: Հավանաբար Ալեքսանդր Աֆանասևիչը հաշվի էր առել իմ վոկալ եւ բեմական տվյալները եւ ցանկություն հայտնել, որ Ալմաստի դերերգը հանձնարարվի Մակսակովային» (նույն տեղում): Այն ժամանակ դեռ երիտասարդ,

ոչ այնքան փորձառու երգչուհու համար հիմնական լուրջ քննություն էր Ալմաստի դերերգը, որը հաջողությամբ հաղթահարեց: Եվ առհասարակ ողջ օպերան կարելու էր հատկապես այն առումով, որ երիտասարդ երգչուհուն հնարավորություն ընձեռեց ավելի լավ ճանաչելու հայ ժողովրդին, ճիշտ հասկանալու եւ արժեւորելու հայ մշակույթն ու Հայաստանը: Այդ եւս վկայում նրա հուշերի հետեւյալ տողերը. «Ալմաստը» վառ ազգային ստեղծագործություն է, այնտեղ արտահայտված է հայկական մելոսի ողջ գեղեցկությունը: «Ալմաստ» օպերան ունկնդրի առջեւ բացում է Հայաստանի անձանոթ բնության հմայքը եւ հայ ժողովրդի կյանքը, սովորությունները, բնավորությունը: Օպերայում շատ կան լիրիկական արիաներ, երգեր, երկխոսություններ: Երաժշտությունը գեղեցիկ է, մեղեդային, ունի խոր դրամատիկական հենք» (նույն տեղում): Բայց երգչուհու համար հեշտ չի եղել այս դերը յուրացնելը: Ալմաստի դերով հանդես գալու համար Մակսակովան ստիպված է եղել բազում դժվարություններ հաղթահարել, նույնիսկ դիմել է իր ուսուցչի օգնությանը: Նրա հուշերում ահա ինչ ենք կարդում այդ մասին. «... Իհարկե, ինձ համար դժվար կլինե՞ր յուրացնել ինչպես երաժշտական, այնպես էլ վոկալ մոր ձեւը, եթե ինձ չօգնե՞ր իմ դասատուն՝ հայտնի բարիտոն Մ. Կ. Մակսակովը: Նրա օգնությամբ ես կարողացա գտնել ճիշտ գեղարվեստական կերպար, արտահայտիչ ֆրազավորում եւ ձայնի ցայտուն հնչողություն:

Դերերգի տիսիտուրան մեցցո-սոպրանոյի համար բարձր է եւ հագեցած հերոսուհու դրամատիկական հույզերով եւ ապրումներով: Որպեսզի կարողանամ հաղթահարել Ալմաստի կերպարի վրա աշխատելու բոլոր դժվարությունները, եւ կազմեցի աշխատանքի խիստ գրաֆիկ եւ մշտապես պահպանում էի օրվա ռեժիմը: Արդյունքը եղավ այն, որ ես հասա բեմական վարմունքի հավաստիության, պարզության եւ անբռնաբերականության եւ, որ ամենակարեւորն է, կարողացա ձայնս հնչեցնել ցայտուն ու բեթել: Այն ժամանակ մամուլն այդպես էր գրում» (նույն տեղում):

«Ալմաստ» օպերայի բեմադրությունն անկասկած մեծ իրադարձություն էր ոչ միայն երիտասարդ երգչուհու, այլեւ Մեծ թատրոնի ողջ ստեղծագործական խմբի համար: Օպերան բեմադրվում էր առաջին անգամ. ինչպես կընդունվեր այն, ինչպես կընկալվեր երաժշտասեր հասարակության կողմից: Մեծ թատրոնի դիրիժոր Լեւ Շոյնբերգն ամենացորդ մկիրումով էր աշխատում, քանզի, ինչպես օպերայի հեղինակ Սպենդիարյանը, ինքը եւս աշակերտել էր մեծանուն Ն. Ռիմսկի-Կորսակովին, եւ այդ համագամանք ինչ-որ իմաստով պարտավորեցնող էր նրա համար: Բոլորն էին աշխատում մեծ ոգեւորությամբ, եւ այդ մասին Մակսակովայի հուշերում կարդում ենք. «Օպերայի բոլոր մասնակիցներն աշխատում էին ստեղծագործական ամենացորդ մկիրումով: Դիրիժոր Շոյնբերգը, բեմադ-

րող-ռեժիսոր Շարաշինեն, Գրիգորի Պիրոգովը՝ Նադիր շահ, Իվանովը՝ Թաթուլ, Լ. Ալեմասովան, Ա. Շարատան, Վ. Շեչենկոն եւ իհարկե երգչախումբն ու բալետը:

Վերջին գործողությունում Պիրոգովը շատ տպավորիչ էր: Գահին բազմած, առանց որեւէ ծեստի, նա միայն իր հիասքանչ ձայնով արտահայտում էր այդ ամենագոր բռնակալի հոգեվիճակի բոլոր երանգները: Նրա ձայնը հնչում էր մերթ հաղթական, մերթ սպառնում էր, ծաղրում, հեգնում, զայրանում, խայթում, բոլոր այս երանգները ստեղծում էին ուժեղ, տիրական բնավորություն» (նույն տեղում):

Հիրավի, Ալ. Սպենդիարյանի «Ալմաստը» հրաշալի օպերա է, այն հայկական օպերային արվեստի գոհարներից է, սիրված ու գնահատված ոչ միայն մեր ժողովրդի կողմից: Այն բազմիցս ներկայացվել է ինչպես Հայաստանում ու Ռուսաստանում, այնպես էլ այլ երկրներում: Ալմաստի դերերգը միշտ էլ իր պատվավոր տեղն է ունեցել եւ ունի շատ անվանի երգչուհիների երգացանկերում: Մեծ թատրոնում, Մակսակովայից բացի, այդ դերերգով հանդես է եկել նաեւ Բ. Չլատազորովան, հայկական օպերային թատրոնում՝ Ե. Ռոմանովան, Թ. Շահնազարյանը, Տ. Սազանդարյանը, Գ. Գալաշյանը, Օ. Գաբայանը, Ն. Անանիկյանը եւ ուրիշներ, Թբիլիսիում՝ Օ. Բլագովիդովան, Օդեսայում՝ Պանտելեւեան, Տաշքենտում՝ Կ. Դավիդովան, Փարիզում՝ Ն. Կարամոզակովան, Նովոսիբիրսկում՝ Լ. Կովալենսկայան, Մ. Գլեբովան եւ ուրիշներ: Սակայն Մարիա Մակսակովան անկեղծորեն հպարտ էր, որ ինքն այդ դերերգի առաջին կատարողն է եղել: Հաճախ առաջինի իրավունքով նա մեկնաբանում, արժեւորում էր մյուս կատարումները՝ բարձր գնահատելով հատկապես Տաթևիկ Սազանդարյանին: Երբ 1939 թ. Մոսկվայում կայացած հայկական արվեստի դեկադայի օրերին երիտասարդ երգչուհի Տ. Սազանդարյանն առաջին անգամ Մեծ թատրոնի բեմում հանդես եկավ Ալմաստի դերով, Մ. Մակսակովան այսպիսի ջերմ կարծիք հայտնեց. «Սազանդարյանն ինձ ապշեցրեց գեղեցիկ, արտասովոր փափուկ հնչող ձայնով, որին նա հմտորեն տիրապետում է, փայլուն դիմախաղով... Այդ փափուկ տոների մեջ իշխանասեր, փառամուլ, ուժեղ Ալմաստի կերպար տալու համար պետք է լինի շատ փորձված արտիստուհի... Սազանդարյանն ինձ հիացրեց: 23 տարեկան հասակում լինել այդքան սքանչելի դրամատիկ դերասանուհի ու վոկալիստ...» (տես «*Литературная газета*», 1939, N 58):

Հիրավի, բազմաշնորհ երգչուհի էր Մարիա Մակսակովան: Նա վախճանվեց 1974-ին եւ ոչ միայն մնաց հայկական օպերային արվեստի պատմության մեջ որպես իշխանուհի Ալմաստի առաջին դերակատարուհի, այլեւ որպես ողջ խորհրդային երգարվեստի անզուգական վարպետներից մեկը:

Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆ

Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ

Մսի 1243 թ. Բ ժողովն ու կանոնները

Սկիզբը՝ էջ 6

Ժ2. «Ամեն պատ ըստ կանոնների առանց ձկան, ձեթի եւ գինու պետք է պահվի, բացի հիվանդության հարկադրանքից, առավել աղուհացքի մեծ պատը, ուրբաթի, չորեքշաբթվա, որոնք Քրիստոսի չարչարանքի օրերն են, ով սրանք լուծի, պետք է նրան տուգանեն ու տուգանքը տան աղքատներին, իսկ Աստուծոն պատ պահելով պետք է հատուցեն» (*Կիրակոս Գանձակեցի*, էջ 219-220):

Ինչպես հասկացանք, կանոնը վերաբերում է պահքին. այն ուսելիքի կամ դրա

առանձին տեսակների համար որոշակի ժամկետով սահմանված արգելք է, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարում (պահեցողություն): Պահքի արտահայտած մյուս իմաստն ինքնաքննության ու խոկումի ժամանակաշրջանն է: Հետաքրքրական է այս փաստը, որ հիշվում են աղուհացքի մեծ պահքը, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահքերը, բայց չաբաթապահքերի վերաբերյալ ոչ մի խոսք չկա: Կանոնը նաեւ ընդունում է հիվանդության պատճառով պահքը չպահելու բացառությունը, որը միա-

նշանակ ընդունելի եւ հասկանալի է: Կանոնը նաեւ սահմանում է, որ ով պահքը լուծի, պիտի տուգանվի, եւ դա պիտի տրվի աղքատներին, եւ պահքը լուծած օրվա տեղն էլ ուրիշ օր պիտի պահի: Պետք է նշել, որ ուրբաթը եւ չորեքշաբթին հավասարապես Քրիստոսի չարչարանքների օրեր են անվանվում: Բնականաբար դա ակնարկում է չորեքշաբթի օրը տեղի ունեցած՝ Հուդայի մատուռայան մասին, որը բուն չարչարանքների օր չէ եւ պատվվում է որպես Ավետման օր եւ Մարդեղության խորհրդի հիշատակ,

այսինքն՝ չորրորդ օրը հրեշտակը տվեց կուսական ավետիսը: Եվ այս ամենից հասկանալի է մի բան. այս կանոնի լինելը այս ժողովի որոշումների շարքում մեզ ցույց է տալիս, որ ժողովրդի կողմից չի պահվել պահքը, որը քրիստոնեական եկեղեցու կյանքի կարեւոր երեւոյթներից է, որը բազմիցս վկայված է եղել Աստվածաշնչում, ինչպես նաեւ Նոր Կտակարանում՝ երկնքի արքայության արժանի դառնալու եւ մեղքերի թողություն ստանալու համար:

Շարունակությունը՝ էջ 8


Մսի 1243 թ. Բ ժողովն ու կանոնները

Սկիզբը՝ էջ 7

ԺԷ. «Սրանից առաջ եւ ամենից առաջ այս ենք հոգացել Յեթնամյա արքայի, իր հայր Կոստանդինի եւ բոլոր իշխանների առաջ. ու բանադրելով բանադրանք ենք դրել ամենքի վրա, որ օժանդակեն եկեղեցուն եւ ամեն տեղ, թե՛ մեծ, թե՛ փոքր հիշոցապետ նշանակեն դարպասների մոտ, քաղաքներում, գյուղերում, բերդերում, ագարակներում եւ անօրեն հայհոյաբերաններին՝ Աստծու բարկությունը շարժողներին՝ աններելի անօրենների, որ անարգուն են հավատը, ստեղծողին, կնունքը, հրեշտակին, քահանային, բերան, երես, գերեզման եւ այլ այսպիսի նոր բուսած չարիքներ, այնպիսիների լեզուն կտրեն կամ ծակեն, լար ներս անցկացնեն եւ նախատիճքով մի օր շրջեցնեն ու ըստ ունեցվածքի տուգանք առնեն, աղքատներին տան» (*Կիրակոս Գանձակեցի, էջ 220*): Հավատ անարգելը մեզ հայտնի հայ միջնադարյան հասարակարգերում մոր երեւոյթ է: Իսկ չարիքների՝ վերը թվարկված շարքում առաջին հայացքից անհասկանալի է, թե անարգել «գտեղծող» ո՞ւմ է նկատի առնված, այսինքն՝ Սուրբ Երրորդության անձերից Հորը, թե՛ Որդուն՝ Քրիստոսին՝ իբրեւ հավատի, կրոնի ստեղծողի: Եթե խոսքը Քրիստոսի մասին է, ապա Նրան անարգելու երեւոյթը մոր չէր, քանի որ դա կարող էին անել բոլոր այն հերձվածների ու աղանդների մոլորալնեւոր՝ Արիստից սկսած, որոնք մերժում էին Որդու աստվածությունը: Քրիստոսին հայհոյող երկրորդ խումբը տարածաշրջանի մահմեդականներն էին, որոնք Նրա դեմ սաստկացնում էին հիշոցները հատկապես խաչակրաց արշավանքների ժամանակ» (*Հայկազյան*

հայագիտական հանդես, Մանուշարյան Ա., «Աստուծամարտական երեւոյթ հայոց մէջ ԺԳ. դարում», Բեյրութ, 2017, էջ 90): Պատմական աղբյուրների հետազոտումում սիրողությունից, մասնավորապես Ձագավանի 1270-ի տեղական եկեղեցական ժողովի «Սահմանք»-ի նախաբանից պարզվում է, որ ստեղծողի ներքո խոսքը վերաբերում է Հորը՝ Արարչին. «...առաւել անքաւելի մեղաւք եւ չարաչար հերձուածովք, որ քան զամ[ենայն] հերձուած լելի է, մինչեւ զայս զի ժողովովք նդովեալ են չարագոյն յիշունցնաստուքն, որ զամ[ենայն] մոռացեալ մեղք եւ չարիք յիշել տան յԱստուծոյ հրեշտակաց եւ բոլորից սրբոց, եւ դողացուցեն զարարածս Աստուծոյ եւ զարշելի եւ զազիր հոգով լնուն զերկիր (*Գարեգին Յովսէփեանց, Ձագաւանից ժողովը, Վաղարշապատ, 1913, էջ 42*):

Հայ իրականության մէջ նախադեպը չունեցող, Աստծուն հայհոյելու զագրելի այդ երեւոյթն անգամ խորթ էր Ի դարի աստվածամերժողական, համայնավարական հասարակարգին: Խորհրդային տարիներին չնայած պաշտոնապես մերժում էին կրոնը, հավատը, ժխտում Աստծո գոյությունը, բայց մարդ չէր հանդգնում անարգել, հայհոյել Ամենաբարձյալին. կար դարեդար փոխանցված, արյան մեջ մակարդված մի ներքին երկյուղ, հոգեբանության մեջ արմատավորված, սքողված հարգանք Արարչի նկատմամբ ու անասելի ազգային մեծ հպարտություն՝ աշխարհում առաջինը Քրիստոսի պաշտամունքը պետականորեն ճանաչված է կնունքը, այսինքն՝ մկրտությունը, հայհոյե-



լում, դա մոր երեւոյթ չէր հայ իրականության մէջ, ինչպես մեզ հայտնի է պատմական նախընթաց դեպքերից: Հարկ ենք համարում նաեւ նշել, որ ժողովը շատ խիստ պատիժներ է սահմանում. լեզուն կտրել կամ այն ծակել, լար անցկացնել ու մեկ օր նախատիճքով լցնել: Այս կապակցությամբ Օրմանյան սրբազանը գրում է. «Այդ խիստ օրէնքը, որ իր բնութեամբ արեւելեան խստութեանց նմանութիւնն ունի, աւելի արեւմուտքի մէջ սկսած հաւատաքննական խստութեանց հետեւողութիւն պէտք է նկատուի» (*Օրմանյան Ս., Բ, ս. 1906-1907*): Սակայն պատմության հետազոտ ընթացքը մեզ փաստում է, որ կանոնն իր սպասելի արդյունքը չի տվել, քանի որ մենք Սմբատ Գունդստաբլի «Դա-

տաստանագրքի» մէջ տեսնում ենք կանոնական որոշման արձանագրումը: Դատաստանագրքի ԿԶ (66-րդ) կանոնով՝ «Վասն որ զԱստված հայհոյէ կամ անարգէ», ենթակա է մահվան (*Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրք», Եր., 1958, էջ 208*):

ԺԸ. «Եթե քահանան գտնվի վերագրյալ մեղքերի մեջ, կրկնակի պատիժ պետք է ընդունի եւ կարգով հանդերձ կարգաթող չարվի, պատժվի» (*Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում*): Այս կանոնից պարզվում է, որ աստվածամարտությանը հարել են ոչ միայն աշխարհականներ, այլեւ հոգեւորականներ: Դեռեւս Շահապիվանի 444-ի ժողովից սկսած՝ բազմաթիվ են հոգեւորականների՝ սարկավագների, աբեղաների, երեցների, անգամ եպիսկոպոսների՝ այս կամ այն աղանդին հարելու փաստերը: Աստվածամարտական երեւոյթի դեմ պայքար է տարվել ոչ միայն Կիլիկիայում, այլեւ բուն Հայաստանում: Այդ պայքարում ինչպես Կիլիկիայում, Հայաստանում էլ եկեղեցուն օգնել, օժանդակել են աշխարհիկ իշխանությունները՝ ի դեմս հայոց մեծամեծ իշխանավորների՝ տիկին Խոշաք Ավագյանի (Չաքարյան տոհմի Ավագյան ճյուղի զվեսավորը՝ 1250-1280-ականներ, հետագայում՝ վրաց թագուհի), Պռոշ Խաղաբալյան սպարապետի (1223-1284), Սադուն Արծրունի ամիրսպասալարի ու աթաբեկի (1263-1284) եւ Սմբատ Օրբելյան Սյունյաց գահերեցի (1253-1273):

Շարունակելի

Գրո ԳԱՆՏՅԱՆ

ԱՄՍՈՒԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



Սկիզբը՝ էջ 6

Հանգստանալն ամռանը եւ կողքի դնենք լարվածությունը: Ուր էլ որ գնաս հանգստանալու, եթե անհանգստություն ունեն մեջդ, դա քեզ այնտեղ էլ է հետապնդում: Սա հատկապես մայրերին է վերաբերում, որ գնում են իրենց գյուղ, կղզի, ամառանոց ու էլի խեղդվում գործերի մեջ: Ասում էիր՝ քաղաքում հանգստի ժամանակ չունես, բայց ախր հիմա էլ չես հանգստանում. գործեր, մաքրություն, հոգնածություն, առեւտուր, հոգսեր: Կանգնիր մի պահ, հանգիստ մտիր, թուլացրո՛ւ արագությունը, հանդարտվիր, հանգստացիր: Մի մարդու էի ճանաչում, որ ապրում էր իր աշխատասենյակում, ապրում էր խելագարի պես, ամբողջ օրն աշխատում էր առանց դադարի: Եվ մի օր գնում է Ս. Աթոս լեռը՝ մի շաբաթ հանգիստ առնելու, հանգստանալու մեկ շաբաթ, բայց... մեկ օրից ավելի չի դիմանում: Երկրորդ օրն արդեն ուզում էր վերադառնալ եւ բռնում է մի վանականի ու հարցնում. «Կներեք, դուք այսպէս եք ապրում»: Վանականը զարմանում է. «Այսպէս, այսինքն՝ ինչպէս, ի նկատի ունես, որ ոչինչ չէմք անում, ծիւլ չենք»: «Ո՛չ,- ասում է,- ծիւլ չեք, տեսնում

եմ՝ ինչպէս եք աշխատում այգում, ինչպէս եք մաքրություն անում, պատրաստում սենյակները մարդկանց համար, բազմաթիվ են ձեր գործերը, դուք էլ զբաղված մարդիկ եք»: «Էհ,- մորից զարմանում է վանականը,- հապա ի՞նչը դուրդ չի գալիս»: «Չեմ դիմանում,- ասում է,- այս խաղաղությամբ, այստեղ շատ հանգիստ է, չափազանց լուռ: Ես ուզում եմ հեռուստացույց նայել, ուզում եմ ձայներ լսել, կռիվ, ուզում եմ լսել ինչպէս է հարեւանս ուտելիս խփում պատառաքողները, դանակները, որը լսում է ողջ հարեւանությունը, լարվածություն եմ ուզում, շարժ, չեմ կարող տանել այսքան հանդարտությունը»:

Կան մարդիկ, որոնց արյան մեջ է լարվածությունը, հոգնությունը, մտահոգությունը. այդ մաշող, չար մտահոգությունը... Սա պարտադիր մտահոգություն չէ, այլ վնասակար ու չար, որ հիվանդացնում է մեր հոգին, եւ մեր հոգին չի սովորում հանգստանալ: Շարունակ այնպես ենք աճում, որ մոռանանք ինքներս մեզ, չնայենք մեր հոգուն, մեր սրտին, չտեսնենք մեր ներքին աշխարհը: Շատերն ասում են. «Մենակ մնամ, ի՞նչ անեն»: Ինչ անեն: Ոչինչ: Շատ լավ կլինի, որ անես այս «ոչինչը», մտես

ամռանը ու ոչինչ չանես մի քանի օր: Շատ չէ, բայց մի քանի օր մտադիր ու հանգստացիր, դու էլ մի քիչ ճգնավոր դարձիր, տունդ վերածիր ճգնարանի, եւ կարելու չէ, որ հանգստանալու չես գնում: Եվ ուր էլ որ լինես՝ Աթենքում, Պատրայում, Սալոնիկում, որեւէ կղզում, գյուղում, Կիպրոսում, Բրյուսելում, Լոնդոնում թե՛ Չիկագոյում, այժմ, որ լսում ես ինձ, մտադիր, ճգնարանի վերածիր տունդ ու հանգստացիր: Հանգստացիր ու մայր խորթ... որովհետեւ երբ հանգստանում եմ լճի ջրերը, պարզ տեսնում ես խորքը, իսկ խորքում ինչ ասես չկա՝ ռետինի կտորներ, պահածոյի տուփեր, զանազան մետված իրեր... Ու սարսափում ես, ասում. «Սա էս եմ»: Մինչդեռ երբ խառնաշփոթ է, ու անընդհատ զբաղված ես, մոռացության ես տրվում, մշուշի մեջ պարզորեն չես հասկանում՝ ինչ է կատարվում: Ասում ես՝ այսպես եմ բոլորը. հեռուստացույց ենք նայում, մոռանում ամեն ինչ, զվարճանում, ցրվում: Այսպես վերցնում ենք մեր սիրտը, կտոր-կտոր մետում աշխարհի հազար ու մի կողմերը ու չենք հավաքվում: Դարձել ենք կտորտանքներ: Հավաքենք այդ կտորտանքները, միացնենք, դառնանք մեկ մարդ, կարողանանք հանգստանալ: Նստիր քո սենյակում ու ոչինչ մի արա, մի մտածիր հոգսերի մասին, ապրիր այն, ինչ ասում է սուրբ Գրիգոր Աստվածաբանը. «Գործ չանելը մեծագույն գործ է»: Մեծ գործ է ոչինչ չանել եւ կարողանալ ոչինչ չանել, որովհետեւ արդեն շատ բան ես անում. հանգստանում ես... Սա մեծ նվեր կլինի քո տան համար. ունենալ հանգստություն քո մեջ: Բոլոր եղանակներին է սա պետք, բայց ամառն ավելի հեշտ է այն ձեռք բերել, որովհետեւ հաճախ տան անդամները բացակայում են տնից, գնում հանգստանալու, կամ դու ես գնում, բաժանվում եք որոշ ժամանակով: Վատ չէ նաեւ, որ գնաս մի տեղ հանգստանալու, թեկուզ կարճ ժամանակով, մենակ՝ հեռու աղմուկից, իրարանցումից: Նույնիսկ զույգը, վատ չէ, որ բաժանվի երբեմն մի երկու օրով. դա չի նշանակում, որ չեք սիրում իրար: Հանգստանալու, ուժերը վերականգնելու կարիք բոլորս ունենք, որպեսզի վերածնվեն մեր հոգու ու մարմնի քջիջենք: Թող ամառն իր ողորդ դառնա մեզ համար «լավ եղանակ», որը մեզ էլ կդարձնի լավ

ու բարի. լավ եղանակ՝ լավ մարդկանցով, լավ հոգիներով, լավ բնավորություններով: Սրան ձգտենք այս ամառ:

Հիմա, երբ ամառ է, մի որոշ ժամանակ անջատիր հեռուստացույցը, դադարեցրո՛ւ հեռուստացույց նայելու սովորությունդ, մի տրվիր դրան: Այնքան բան կա անելու, մտածելու, որ ձմռան լարված առօրյայում չենք հասցրել: Օրինակ՝ դասավորենք մեր իրերը: Ես, օրինակ, ունեմ այդ խնդիրը: Տարվա ընթացքում անընդհատ գրքեր են հավաքվում, դնում եմ մեկը մյուսի վրա առանց կարգ ու կանոնի, ինձ նվիրում են զանազան իրեր, որոնք տարվա ընթացքում չեմ կարողանում դասավորել: Ամառը հարմար ժամանակ է կարգի բերելու իրերը, գրքերը, պահարանները, դարակները: Եթե տարվա ընթացքում նայում ես քո գրադարակներին, սենյակին ու մտածում. «Երբ եմ ժամանակ գտնելու իրերս դասավորելու», ամառը իսկական ժամանակն է դրա համար: Հիմա, երբ ժամանակ ունես, կարգի բեր իրերդ:

Շարունակելի

Հունարենից թարգմանեց
Տաթևիկ ՄՏԺՈՒՆՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՂԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 1.08.2018 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ